

**1921Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՍԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ**

Առաջին համաշխարհային պատերազմը ավարտվեց Վերսալի հաշտության պայմանագրով, որը Սեն-ժերմենի, Նեյի, Տրիանոնի և Աւրի պայմանագրերի հետ միասին պատմության մեջ մտել է Վերսալյան համակարգ անվանումով:

Խորհրդային Ռուսաստանը հրավիրված էր Փարիզի խորհրդա-ժողովին և խորհրդային իշխանության գոյության համար նպաստավոր միջազգային պայմաններ ապահովելու նպատակով, իր հերթին, 1918 - 1921թ.թ. ձեռնամուխ եղավ մի շարք պետությունների հետ պայմանագրերի կնքմանը:

Եթե Ռուսաստանի կնքած պայմանագրերի շարքը, ընդհանուր առմամբ, հիմնվում է պայմանադիր պետությունների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը հարգելու վրա, ապա նույնը չի կարելի ասել 1921թ. մարտին Մոսկվայում, Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված չարաբաստիկ պայմանագրի մասին: Մոսկվայի և նրա հիման վրա կնքված Կարսի պայմանագրերի համաձայն ամբողջ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը, որը մինչև 1918թ. եղել է Ռուսաստանի կազմում (մոտավորապես 23,6 հազ. կմք) անցան Թուրքիային, իսկ Նախիջևանի նկատմամբ սահմանվեց Ադրբեջանի պրոտեկտորատը:

Ինչպես հայտնի է ՌԱՖՍՀ-ն սկզբնական շրջանում չընդունեց Անդրկովկասում ստեղծված անկախ հանրապետություններին և ձգտում էր այդ հանրապետությունները խորհրդայնացնել և շաղկապել Ռուսաստանի հետ: Սակայն 1921թ., երբ կնքվեց պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև Անդրկովկասյան հանրապետությունները արդեն խորհրդային էին և այն տարածքային զիջումները, որ կատարվեցին Թուրքիային, առաջին հայացքից դժվար է հասկանալ այդ երկու պետությունների ավանդական ախոյանության ֆոնի վրա: Եշտարտությունը վերհանելու համար կանգ առնենք այն խիստ բարդ իրավիճակի վրա, որ ստեղծվել էր 1920թ. վերջին և 1921թ. սկզբներին Ռուսաստանում:

Դեռևս 1920թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(բ)Կ Առևտրային նահանգական կոնֆերանսում ունեցած իր ելույթում Վ. Լենինը նշում էր, որ. «...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որոնք վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույն իսկ օրավուր»: Իսկ 1921թ. փետրվարի 28-ին բանվորների և գյուղացիների դեպուտատների Առևտրային խորհրդի պետումի նիստում Լենինը նշում էր, որ Կովկասում «մենք մեծ պատե-

րազմի սահմանագծին ենք գտնվում»:

Այս պայմաններում Ռուսաստանին ոչ միայն անհրաժեշտ էր չեզոքացնել Թուրքիային, որի հետ պատերազմը անցանկալի էր, այլև դաշնակից էր պետք Անտանտի դեմ ուղղված պայքարում: Քանի որ Լոնդոնում այդ ժամանակ բանակցություններ էին վարվում Թուրքիայի և Անտանտի պետությունների միջև, ապա Ռուսաստանի համար մտավախություն կար, որ Թուրքիան կանցնի Անտանտի կողմը և դրա հետևանքով Անդրկովկասի հարավում կստեղծվի օջախ՝ ուղղված Ռուսաստանի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների դեմ:

Բուլշևիկները միանգամայն սթափ մոտեցում էին ցուցաբերում քեմալական շարժմանը: «...Անատոլիական Թուրքիան "հեղափոխական" է կոչվում այն չափով, որ չափով այն իր ազգային անկախության համար մղած պայքարում գրավել է հեղափոխական դիրքեր համաշխարհային իմպերիալիզմի նկատմամբ»:

Այս պայմաններում ստորագրվեցին Մոսկվայի, իսկ դրանից 7 ամիս հետո Կարսի պայմանագրերը: Որոշ հանգամանքների հաշվառմամբ՝ այդ պայմանագրերը հարկավոր է քննության առնել առանց իրարից բաժանելու:

Այդ հանգամանքներից է այն, որ.

1. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը վերաբերում են միևնույն հարցին:

2. Մոսկվայի պայմանագրում (հ. 15) Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի վերջիններս հետագայում Թուրքիայի հետ բանակցություններում ընդունեն այն հողվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց:

3. մինչև Կարսի խորհրդաժողովի գումարումը Ռուսաստանը և Թուրքիան արդեն վավերացրել էին Մոսկվայի պայմանագիրը և 1921թ. սեպտեմբերի 22-ին, առանց սպասելու Կարսի պայմանագրի կնքմանը, որ պարզվի, թե Մոսկվայի պայմանագրի որ դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, Կարսում փոխանակեցին վավերագրերը:

Բացի այդ, Կարսի պայմանագիրը որպես առանձին միջազգային փաստաթուղթ չի ընդունվում նաև հայ պատմագրության մեջ: Այսպես, Բ. Բորյանը նշում է, որ Կարսի պայմանագիրը «քաղաքական տեսակետից չի հանդիսանում միջազգային-իրավական նորմերի ինքնուրույն փաստաթուղթ, այլ կրկնում և ամրագրում է 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը»: Կարսի պայմանագիրը որպես միջազգային-իրավական ակտ չի դիտում նաև ակադեմիկոս Գ. Գալոյանը: Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ետպատերազմյան շրջանի միջազգային իրավունքով գնահատելու գալթակությունը մեծ է, քանի որ ժամանակակից միջազգային իրավունքը ավելի առաջադիմական է, քան այն ժամանակ-

վա իրավունքը, ուստի ավելի շատ կռվաններ է ընձեռում այդ պայմանագրերը անվավեր ճանաչելու համար: Սակայն մեթոդոլոգիական տեսակետից ավելի ճիշտ կլինի պայմանագրերի գնահատումը ըստ դարասկզբի միջազգային իրավունքի: Ինչպես նշվում է «Միջազգային իրավունքի դասընթացում»․ «Սահմաններ որոշող պայմանագրի վավերականությունը գնահատելիս՝ հարկավոր է առաջնորդվել այն ժամանակաշրջանի միջազգային իրավունքով, երբ այդ պայմանագիրը կնքվել է: Չի կարելի պահանջել, որ պետությունը XVդ. ղեկավարվի, ասենք, XXդ. իրավունքով: Յետևաբար, պետությունների փոխհարաբերությունները, ընդհանրապես, և տարածքային հարցերը, մասնավորապես, XV դարում պետք է գնահատել այդ ժամանակաշրջանի իրավունքով: Այդպես, տարածքի ձեռք բերման իրավաչափությանը XV դարում պետք է գնահատվի այն ժամանակ գոյություն ունեցած կանոններով:

Սրա հետ կապված հարկավոր է նշել, որ 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին ՄԱԿ-ի հռչակագիրը հաստատելով տարածքի պատկանելիության փոփոխության արգելումը ուժի սպառնալիքով կամ նրա կիրառությամբ, այնուամենայնիվ, վերապահություն է անում, որ դա չպետք է մեկնաբանվի որպես անցյալի համաձայնագրերը, որոնք կնքվել են մինչև ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը, իրավաբանական ուժից զրկող, եթե այդ պայմանագրերը միջազգային իրավունքի համաձայն ուժի մեջ են: Տարածքային վեճերի լուծման պրակտիկայում բազմիցս նշվել է համապատասխան ժամանակաշրջանի միջազգային իրավունքը հաշվի առնելու անհրաժեշտությունը (օրինակ, Պալմաս կղզու մասին վեճով արբիտրաժային որոշումը):

Մոսկվայի պայմանագրով խախտվում էր ՅԽՍՀ տարածքային անձեռնմխելիությունը, նրա սուվերենությունը: ՅԽՍՀ-ն չէր մասնակցում Մոսկվայի պայմանագրին, հետևաբար խախտվում էր նաև սուվերեն հավասարության սկզբունքը:

Նախահեղափոխական ռուս իրավաբան Ա.Ն.Ստոյանովը գրում էր. «միջազգային պայմանագրերը անվավեր են, եթե հակասում են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքին (այսինքն՝ սուվերենության, իրավահավասարության և այլն) »:

Վ. Դանևսկին և Ֆ. Մարտենսը գրում էին, որ միջազգային պայմանագրերը, որոնք սահմանափակում կամ ոչնչացնում են պետությունների հիմնական իրավունքները՝ անօրինական են և հակասում են միջազգային իրավունքին:

Մոսկովյան պայմանագրի անվավերությունը կայանում էր նաև նրանում, որ միջազգային պայմանագրային պրակտիկայում աննախադեպ ձևով անտեսվում էր *pacta tertiis nec nocent nec prosunt* (պայմանագրերը չեն վնասում և չեն բարենպաստում երրորդ անձանց) սկզբունքը: Միջին դարերում այդ սկզբունքը ուներ հետևյալ աֆորիզմի ձևը. «Գործը, որը կատարվել է այլոց միջև չպետք է վնասի նրան

չմասնակցող անձին» (*res inter alios acta alteri nocere non debet*):

Հայ ճանաչված միջազգայնագետ Յու. Բարսեղովը, իր "Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է" աշխատության մեջ, խոսելով տարածքային վեճերի մասին, հպանցիկ նշում է, որ. "...Տարածքային վեճի առարկա կարող է լինել միջազգային պայմանագրի իրավական ուժը, որը դիտվում է որպես տարածքային տիրապետման իրավահիմք: Օրինակ, այն դեպքում, երբ պետությունը յուրացրել է մյուս պետության տարածքը ոչ թե կամավոր զիջման հիման վրա, այլ երկրորդ կամ երրորդ պետությունների համաձայնությամբ, որոնք տնօրինում էին օտար տարածքը ի խախտումն միջազգային իրավունքի "nemo dat quod non habet" (ոչ ոք չի կարող տալ այն, ինչ չունի) կամ "nemo plus juris transferre potest quam ipse habet" (ոչ ոք չի կարող ավելի շատ իրավունք տալ, քան ինքն ունի) :

Ի միջի այլոց, նշենք, որ նման համաձայնություններ տեղ էին գտել նաև ԽՍՀՄ պրակտիկայում: Դեռ 1921թ. մարտին Մոսկվայում ստորագրված խորհրդա-թուրքական պայմանագիրն է և ԽՍՀՄ-ի և Ֆաշիստական Գերմանիայի միջև 1939թ. չհարձակման մասին պայմանագրի վերաբերյալ գաղտնի արձանագրությունը:

Այդ հանգամանքը նշում է նաև Շ. Թորիկյանը. "...Դաշնագիր մը կրնաց պարտավորություններ դնել միայն ստորագիր կողմերուն և ոչ թե երրորդի մը վրայ: Հայաստանի հանրապետությունը կողմ չէր այս դաշնագրին պարագային և, հետևաբար, հայկական հողամասերու վերաբերող դաշնագրի տրամադրությունները չեն կրնար, իրավական պարտավորություններ դառնալ Հայաստանի համար":

Սա միջազգային պայմանագրային իրավունքի կարևորագույն սկզբունք է: Ինչպես նշում է Մարտենսը. «Ընդհանուր կանոնի համաձայն, պայմանագիրը պարտավորեցնում է միայն կոնտրագենտներին»:

Այդ մասին նշում է նաև Ֆ. Լիստը. «Պայմանագիրը լիազորում է և պարտավորեցնում է պայմանագրի մեջ մտնող կողմերին: Հետևաբար, պայմանագիրը չի լիազորում և պարտավորեցնում երրորդ պետություններին»:

Հետագայում այդ սովորութային նորմը տեղ գտավ 1969թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում: «Պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ ու իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնությանը դրան»:

Հետևաբար, այդ պայմանագրերը (1921թ. Մոսկվայի և Կարսի) *ab initio* (սկզբից) օրինական ուժ չունեն, քանի որ նրանց բովանդակությունը հակասում է միջազգային իրավունքին:

Պատմագրության մեջ փորձեր են եղել Հայաստանի Մոսկովյան կոնֆերանսին չմասնակցելու պատասխանատվությունը բարդել հենց

Հայաստանի վրա: Ցավոք, դա ընդունված էր անգամ հայ պատմագրության մեջ: Հայկական պատվիրակության մասնակցության ծախսերը բացատրվում էր դաշնակցության 1921թ. փետրվարյան ապստամբությամբ: Սակայն անտեսվում էր թուրքական կողմի մեղավորությունը: Ինչպես արդարացիորեն նշում է է. Ջոհրաբյանը իր «Հայ-թուրքական հարաբերությունների պատմությունից (1920թ. նոյեմբեր - 1921թ. փետրվար)» հոդվածում. «Մովետական Հայաստանի պատվիրակությանը վիճակված չէր մասնակցել կոնֆերանսին: Մոսկվա ժամանած քեմալական պատվիրակությունը հրաժարվեց հայ պատվիրակների հետ կլոր սեղանի շուրջ բանակցելուց: Մարտի 12-ի նիստի արձանագրությունները ցույց են տալիս, որ թուրքերը իրենց այդ վարքագիծը բացատրել են հայ պատվիրակների հետ բանակցություններ վարելու "լիազորությունների" բացակայությամբ, որը միմիայն պատրվակ էր: ...Հայ պատվիրակների հետ բանակցություններից հրաժարվելու պատճառը... սեպարատ պայմանագիր կնքելու ցանկությունն էր: Այդ բանն ապացուցվեց նաև հետագայում, երբ, չնայած Մոսկվայում ձեռք բերված համաձայնությանը, տունդարձի ճանապարհին թուրքական պատվիրակները թիֆլիսում նորից հրաժարվեցին միացյալ կոնֆերանսից, և Ադրբեջանի հետ առանձին բանակցություններ սկսելու փորձ կատարեցին»:

1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքումից հետո անցել է ավելի քան 80 տարի, սակայն ՀՀ-ը պաշտոնապես չի արտահայտել իր վերաբերմունքը այդ պայմանագրերի նկատմամբ: Թեև հանուն ճշմարտության պետք է ասել, որ առանձին գործողություններ եղել են: Այսպես, դեռևս 1921թ. Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության լուծվել էր Խորհրդային Հայաստանի տարածքների հարցը: Այդ կապակցությամբ Չիչերինը հետևյալ պատասխանն է հղել Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Տեր-Պարրիելյանին. «Հարգելի ընկեր, ստացել են ընկ. Բեկզադյանի ստորագրությամբ ռուս-թուրքական կոնֆերանսում Ռուսաստանի պատվիրակության դեմ մեղադրանքներով լի դիմումը: Դիմումը ելնում է նրանից, որ իբր թե մեր կողմից ոչ մի ջանք չի գործադրվել Կարսը պաշտպանելու համար: Ընկ. Բեկզադյանը գործն այնպես է ներկայացնում, կարծես թե բանակցություններն սկսվել են մեր քաղաքական հանձնաժողովի առաջին նիստով:

Նա տարօրինակ կերպով շրջանցում է, որ քաղաքական հանձնաժողովի նիստը մեր և թուրքերի միջև սկսվել է իսկական բանակցություններից երկու շաբաթ անց: Բանակցությունների առավել լարված շրջանը տեղի է ունեցել բոլորովին էլ ոչ հանձնաժողովի նիստերում, այլ մասամբ անդրկուլիսյան բանակցություններում՝ ազդեցիկ ընկերների աջակցությամբ: Քաղաքական հանձնաժողովի նիստերը բացվում էին այն ժամանակ, երբ հարցերն արդեն որոշված էին լինում:

Այդ պատճառով էլ պայմանագրային սահմանը ոչ թե ոչնչով չարդարացվող նվեր է թուրքերին, այլ ամենադաժան երկարատև պայքարի արդյունք»:

Սակայն, չնայած այդ բողոքին ՀԽՍՀ իշխանությունները, անելով միայն աննշան ուղղումներ, ստորագրեցին նույն բովանդակությունը ունեցող Կարսի պայմանագիրը:

Այնուհետև, 1945թ. Պոտսդամի կոնֆերանսում ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովը բարձացրեց հայկական տարածքները ԽՍՀՄ-ին վերադարձնելու հարցը: Նա մասնավորապես նշեց, որ. «1921թ. թուրքերը օգտվեցին Սովետական պետության թուլությունից և խլեցին նրանից Սովետական Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ Սովետական կառավարությունը բարձրացրել է Խորհրդային Միությանը օրինականորեն պատկանող տարածքների վերադարձման հարցը»:

1989թ. ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ելույթ ունենալով ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարում նշեց, որ. «Երբ արտաքին գործերի մինիստր Մոլոտովը իր ժամանակին (1953թ.-Ս.Ա.) հայ ժողովրդի անունից հայտարարեց, որ նա հրաժարվում է Կարսի մարզի և այն տարածքների նկատմամբ պահանջներից, որտեղ տեղի էր ունեցել 1915թ. ցեղասպանությունը, ապա նա ճշմարտությունը չի ասել: Նա անխղճորեն ոտնահարում էր Խորհրդային Միության ժողովուրդներից մեկի զգացմունքներն ուշահերը: Հայ ժողովուրդը խաղաղության կողմնակից է: Ոչ մեկը չի առաջարկում այս հարցում ուժ կիրառել, սակայն մենք հույս ունենք, որ այս հարցը հետագայում կգտնի իր խաղաղ լուծումը»:

1990-1991թթ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդում հատուկ հանձնաժողով ստեղծվեց Հր. Սիմոնյանի գլխավորությամբ, որը պետք է ուսումնասիրեր Առևճակի և Կարսի պայմանագրերի վավերականության հարցը: Սակայն հանձնաժողովի գործունեությունը հետագա շարունակություն չունեցավ, քանի որ այն ժամանակ դա Հայաստանին կկանգնեցներ մեծ բարդությունների առաջ:

Այժմ անհրաժեշտ է, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը հատուկ արտահայտի իր դիրքորոշումը խնդրո առարկա պայմանագրերի մասին: Դա անհրաժեշտ է այն պատճառով, որ միջազգային իրավունքի արևմտյան դոկտրինը մինչև օրս էլ որպես տարածքի ձեռքբերման կամ պահպանման իրավահիմք ընդունում է վաղեմության ժամկետը:

Այդ ժամկետը դադարում է գործելուց, երբ տուժող կողմը ինչ-որ ձևով արտահայտում է իր դժգոհությունը (պետական իշխանության բարձրագույն մարմինների ընդունած հայտարարություններում, նոտաների ձևով, ժողովրդական ապստամբությունների և այլն): Հակառակ դեպքում հաշվվում են, թե տուժող կողմը լռելյայն ընդունել է կա-

տարված տարածքային փոփոխությունները:

Դա ամրագրված է նաև "Միջազգային պայմանագրերի մասին" Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածում: Այնտեղ նշվում է, որ «Պետությունը այլևս իրավունք չունի վկայակոչելու պայմանագրի անվավերության կամ ընդհարման, նրանից դուրս գալու կամ նրա գործողությունը դադարացնելու հիմքը 46-50-րդ հոդվածների կամ 60-րդ և 62-րդ հոդվածների հիման վրա, եթե, այն բանից հետո երբ նրան հայտնի են դարձել հետևյալ փաստերը՝ ա) նա որոշակիորեն համաձայնել է, որ պայմանագիրը նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ, կամ բ) նա պետք է իր վարքագծի բերումով համարվի լռելյայն համաձայնվող այն բանին, որ պայմանագիրը նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ»:

Կարծում ենք՝ եկել է ժամանակը չեղյալ հայտարարելու այդ չարաքաստիկ պայմանագրերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նոր ի հայտ եկած արխիվային նյութերի համաձայն այդ պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 2 օր անց՝ մարտի 18-ին և թվա գրրված է հետին թվով (մանրամասն տես *Ք. Կասանձյան*, "К. вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921г.", - "Вестник общественных наук" НАН РА, Ереван, 1999, N1, с. 183-187.):
2. *Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ 42, էջ 29
3. Նույն տեղում, էջ 439-440
4. *Жизнь национальностей*, 22 марта 1921г.
5. *Б. Борьян*, "Армения, международная дипломатия и СССР" ч. II, 1929, М-Л, с. 300-301:
6. *Տես Գ. Գալղյան*, "Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թ.թ." Ե, 1999, էջ 484:
7. *Курс международного права*, Т2, М, Наука, 1989, с. 98-99:
8. *А. Н. Стоянов*, "Очерки истории и догматики международного права", Харьков, 1875, с. 494:
9. *В. И. Даневский*, "Пособие к изучению истории и системы международного права", вып. 1, Харьков, 1892, с 219, *Փ. Мартенс*, "Современное международное право цивилизованных народов", Т 1, изд. 4-е, СПб, 1898, с. 394-396:
10. *Յու. Բարսեղով*, "Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է", Հայաստան, Ե, 1990, էջ 124
11. *Շ. Թորիկյան*, "Հայկական հարցը և միջազգային օրենքը", Բեյրութ, 1976, էջ 106-107
12. *Փ. Мартенс*, Ука. 8 соч., Т1, СПб, 1898, с. 411;
13. *Փ. Лист*. Международное право в систематическом изложении, Юрьев (Дерпет), 1902, с.179;

14. *Действующее международное право*, Т1, М, 1996, с. 354:
15. Տես "Լրիւրեր" հասարակական գիտությունների, 1971, N10 (346), էջ 20:
16. *Գ. Գալոյան* Աշխ., Ե, 1999, էջ 456-457
17. *Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945гг.*, Т VI, Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав - СССР, США и Великобритании (17 июля - 2 августа 1945г.). Сборник документов, М. , 1980, с. 40-41;
18. *Первый съезд народных депутатов СССР*, стенографический отчет. Т II, 25 мая - 9 июня 1989г., с. 332-333, М, 1989
19. *Ю. Барсегов*, Территория в международном праве, М, 1958, Юр. лит., с.107-109:
20. *Действующее международное право*, Т.1, М, 1996, с. 258: